Ամ. 4. Ա. Ֆ. 328

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

2-4196 a

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ
1910

655
4-21

Арм.
2-4196а
655
Կ-21
24 SEP 2010

Թիֆլիսի Նահանգական՝ ընկերութիւնների վերաբերեալ Օրէնքի օրագրական որոշմամբ 1909 թ. դեկտեմբերի 17-ին «Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը» մուծուած է մատեանի մէջ 134 համարի տակ, այս կանոնադրութիւնը հաստատուած է և յիշեալ Ընկերութեան գործունէութիւնը սկսելու համար ոչ մի արգելք չկայ։

Նահանգապետի փոխարէն՝
Փոխ-նահանգապետ Ա. ՉԵՐՆԵՎԻՍԿԻ
1910 թ. յունուարի 13.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

§ 1. Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը հիմնւում է Թիֆլիսում՝ լուսաւորութիւն տարածելու նպատակով։ Այդ նպատակը իրագործելու համար Ընկերութեանը, համապատասխան դէպքերում պատշաճաւոր թոյլտուութեամբ և այս առարկային վերաբերեալ գործող օրէնքների և պետական առանձին կարգադրութիւնների պահպանութեամբ, թոյլ է տրւում՝

ա) հրատարակել հայերէն լեզուով ինքնուրոյն և թարգմանական ամեն տեսակ գրքեր, քարտէզներ,

Инв. № 21565

23.824
24.05.2013

պատկերներ և տպագրական ուրիշ գործեր, բ.) տարածել թէ սեփական և թէ ուրիշների հրատարակութիւնները, բանալով Թիֆլիսում և Կովկասի ուրիշ վայրերում գրքերի պահեստներ և գրախանութներ, նոյնպէս և շրջիկ գրավաճառների օգնութեամբ և այլ միջոցներով։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

§ 2. Ընկերութիւնը իրաւունք ունի անշարժ գոյք ձեռք բերելու և առհասարակ օժտուած է իրաւական անձի բոլոր արտօնութիւններով։

§ 3. Ընկերութիւնը իրաւունք ունի մրցանակներ նշանակելու հայերէն լաւագոյն գրուածքների համար։

§ 4. Ընկերութիւնը իրաւունք ունի, պատշաճաւոր թոյլտուութեամբ, հրատարակել նաև պարբերական հրատարակութիւններ։

§ 5. Ընկերութիւնը ունի կնիք՝ «Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն» մակագրով։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 6. Ընկերութիւնը կազմուած է ա) պատուաւոր, բ) մշտական, գ) իսկական և դ) աշխատակից անդամներից։ Անդամ կարող են լինել երկու սեռի անձինք։ Անդամների թիւը սահմանափակուած չէ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ ԳԱ ԳԻՐ
Ա. Մեսրոպյան անվան
39769-63

Ծանօթ. Ընկերութեան անդամ լինել չեն կարող՝ ա) անչափահասները, բ) իսկական ծառայութեան մէջ գտնուած զինուորներն ու իւնկերները, գ) աշակերտները և դ) դատարանով իրաւունքից զրկուածները։

§ 7. Պատուաւոր անդամ ընտրւում են Ընկերութեանը առանձին ծառայութիւն մատուցած կամ Հայոց գրականութեան և Հայոց հրատարակչական գործի մէջ իրենց գործունէութեամբ յայտնի անձինք։

§ 8. Մշտական անդամ կարող են լինել Ընկերութեան օգտին միանուագ առնուազն 75 ր. վճարողները։

§ 9. Իսկական անդամ կարող են լինել տարեկան երեք ռուբլի վճարողները։

§ 10. Աշխատակից անդամ ընտրւում են մէկ տարով այնպիսի անձինք, որոնք իրենց աշխատանքով և գիտութեամբ կարող են նպաստել Ընկերութեան նպատակներին։

§ 11. Պատուաւոր անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ, Վարչութեան կամ Ընկերութեան Թիֆլիսում բնա-

կ.ող անդամների 1/10 մասի առաջարկութեամբ։ Իսկ մնացեալ անդամներին ընդունում է Վարչութիւնը Ընկերութեան որև է անդամի առաջարկութեամբ։ Բոլոր տեսակի անդամները հաւասար իրաւունքներ ունեն։

§ 12. Պատուաւոր և աշխատակից անդամների համար պարտաւորեցուցիչ չէ անդամավճար վճարելը։ Այն իսկական անդամները, որոնք առաջին կիսամեակում չեն վճարել անդամավճարը, հեռացած են համարւում Ընկերութիւնից, մինչև անդամավճարը վճարելը։ Ընդհանուր ժողովին իսկական անդամներից կարող են մասնակցել նրանք, որոնք վճարել են անդամավճարը։

§ 13. Ընկերութեան բոլոր անդամները իրաւունք ունեն ամեն տարի ձրիաբար ստանալ Ընկերութեան հրատարակութիւններից երեք ր. արժողութեամբ գրքեր և այլն։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 14. Ընկերութեան միջոցները բաղկացած են՝

ա) անդամավճարներից.

բ) § I-ի մէջ յիշած Ընկերութեան նպատակների իրագործումից ստացած գումարներից.

գ) դրամագլխի տոկոսներից և Ընկերութեան

պատկանած անշարժ ու շարժական գոյքերի եկամուտներից.

դ) նուիրաբերութիւններից.

ե) յօգուտ Ընկերութեան, ամեն մի առանձին դէպքում պատշաճաւոր թոյլտուութեամբ, կարդացած դասախօսութիւնների, տուած համերգների, ներկայացումների, երեկոյթների, զբօսանքների և ամեն տեսակ ուրիշ զուարճութիւնների արդիւնքից։

§ 15. Ընկերութեան գումարներն են՝

ա) ընթացիկ,

բ) պահեստի և

գ) յատուկ։

§ 16. Ընկերութեան այս կամ այն նպատակի իրագործման համար նուիրուած յատուկ գումարի գործադրութիւնը կարող է փոխուել միմիայն նուիրաբերողի հաւանութեամբ. իսկ կտակած գումարների նպատակը մնում է անփոփոխ։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆԸ

§ 17. Ընկերութեան գործերը վարում են Թիֆլիսում գործող. 1. Ընդհանուր ժողովը, 2. ա) Վարչութիւնը, բ) Խմբագրական և գ) Վերահսկողական մասնաժողովները։

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

§ 18. Իւրաքանչիւր տարի, ապրիլ ամսից ոչ ուշ, Վարչութիւնը հրաւիրում է Թիֆլիզում հերթական Ընդհանուր ժողով, որի զբաղման առարկաներն են՝ ա) ընկերութեան նախընթաց տարւայ գործունէութեան և դրամական դրութեան ընդհանուր հաշուի, նոյնպէս և առաջիկայ տարւայ նախահաշուի հաստատութիւնը, բ) պաշտօնավար անձանց ընտրութիւնը, գ) պատուաւոր անդամների ընտրութիւնը, և դ) Վարչութեան և Ընկերութեան առանձին անդամների առաջարկների քննութիւնը։

§ 19. Արտակարգ Ընդհանուր ժողովներ գումարւում են՝ ա) Վարչութեան հայեցողութեամբ, բ) Վերահսկիչ մասնաժողովի պահանջմամբ և գ) Ընկերութեան 20 անդամների՝ Վարչութեանը տուած գրաւոր յայտարարութեամբ։

§ 20. Ընդհանուր ժողովները հրաւիրւում են յայտարարութիւններով տեղական լրագիրներում, նիստից առնւազն մէկ շաբաթ առաջ։

§ 21. Ընդհանուր ժողովը կայացած է համարւում, եթէ ներկայ է Թիֆլիսում եղած անդամների 1/5 մասը, բացի այն դէպքերից, երբ քննւում է Կանոնադրութեան փոփոխութեան և Ընկերութեան գործունէութիւնը դադարեցման խնդիրը, որպիսի գործերը վճռելու համար անհրաժեշտ է առաջին նիստում Թիֆլիս եղած անդամների 2/3 մասի ներկայութիւնը։ Իսկ եթէ այդքան անդամներ ներկայ չլինելու պատճառով՝ Ընդհանուր Ժողովը չի կայանում, միևնոյն խնդիրների քննութեան համար մի շաբաթից ոչ վաղ երկրորդ Ընդհանուր ժողով է հրաւիրւում, որը կանոնաւոր է համարւում, քանի անդամ էլ որ ներկայ գտնւին։

§ 22. Ընդհանուր ժողովը բացւում է Վարչութեան նախագահի ձեռքով և այնուհետև ընտրում է իր համար նախագահ և քարտուղար, բայց ոչ Ընկերութեան պաշտօնավար անձերից։

§ 23. Ընդհանուր ժողովում խնդիրները վճռւում են ձայների պարզ առաւելութեամբ, բացի միայն պատուաւոր անդամ ընտրելու, պահեստի գումարը ծախսելու, անշարժ կալուածք գնելու և ծախելու, Ընկերութեան Կանոնադրութիւնը փոփոխելու և գործունէութիւնը դադարեցնելու հարցերից, որոնց վճռելու համար պահանջւում է ձայների 2/3 առաւելութիւն։ Ձայների հաւասարութեան դէպքում նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս։

Ծանօթ. Ընդհանուր ժողովների քննութեանը թոյլատրւում են այնպիսի խնդիրներ, որոնք անմիջական կապ ունեն Կանոնադրութեան ո-

բոշած գործունէութեան հետ և որոնց մասին վաղօրօք ծանուցուած է Ընկերութեան անդամներին։

2. ՊԱՇՏՕՆԱՎԱՐ ԱՆՁԻՆՔ

Ընդհանուր կանոններ

§ 24. Վարչութեան և Մասնաժողովների բոլոր անդամները, նոյնպէս և նրանց բոլոր փոխանդամները ընտրւում են Ընդհանուր ժողովում դաղտնի քւէարկութեամբ ձայների պարզ առաւելութեամբ (կէսից աւելի) երեք տարով, բացի Վերաստուգիչ մասնաժողովի անդամներից և փոխանդամներից, որոնք ընտրւում են մէկ տարով։ Վարչութեան և խմբագրական մասնաժողովի կազմից ամեն տարի դուրս է գնում անդամների և փոխանդամների 1/3-ը, սկզբում վիճակով, իսկ յետոյ ընտրութեան ժամանակի համեմատ։ Դուրս գնացողները կարող են կրկին ընտրւել։

§ 25. Վարչութեան և Մասնաժողովների անդամների թւի համեմատ ընտրւում է ամեն երկու պաշտօնավարին մի մի փոխանդամ, որ փոխարինում է պաշտօնավար անձին նրա մահւան, պաշտօնից հրաժարւելու, տեւական հիւանդութեան կամ քաղաքից բացակայելու դէպքում։

§ 26. Բոլոր ընտրովի պաշտօնները կատարւում են ձրի. բայց եթէ Ընկերութեան գործունէութիւնն ընդարձակւի, Ընդհանուր ժողովին է թողնւում այս կամ այն պաշտօնավար անձին առանձին վարձատրութիւն նշանակել, բայց միմիայն՝ ընտրութիւնները կատարելուց առաջ։

§ 27. Վարչութեան և Մասնաժողովների նիստերը համարւում են օրինաւոր, երբ ներկայ են անդամների կէսից աւելին։

Ա.) ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

§ 28. Վարչութիւնը գտնւում է Թիֆլիսում և կազմւած է 9 կամ 11 անդամից, որոնք իրենց միջից ընտրում են նախագահ, փոխնախագահ, քարտուղար և գանձապահ։

§ 29. Վարչութիւնը կարող է իր միջից ընտրել յատուկ անձինք կամ յատուկ ենթաժողովներ, անմիջական հոգացողութիւն ունենալու, Վարչութեան ցուցումների համեմատ, գրքերի տպագրութեան և գրավաճառութեան մասին։

§ 30. Վարչութիւնը վարում է Ընկերութեան տնտեսական մասը, պահում է դրամական հաշիւները, հրատարակում է Խմբագրական մասնաժողովից հաւանութիւն գտած գրքերը, կազմակերպում է գրավաճառութիւնը, Ընդհանուր

ժողովին ներկայացնելու համար պատրաստում է տարեկան ընդհանուր հաշիւ Ընկերութեան նախընթաց տարւայ գործունէութեան և գումարների դրութեան մասին և առաջիկայ տարւայ ծախքի նախահաշիւը, ընդունում է մշտական և իսկական անդամներ և ընտրում է գործակից անդամներ, քննում է առանձին անդամների առաջարկներն ու հարցապնդումները և 20 անդամի դրաւոր պահանջամբ, մի ամսից ոչ ուշ, այդ առաջարկները ներկայացնում է Ընդհանուր ժողովի քննութեանը իր եզրակացութեան հետ միասին, նշանակում է և արձակում Ընկերութեան հաստատութիւնների մէջ վարձով ծառայողներին և ոճիկ է նշանակում նրանց, յարաբերութիւն է պահպանում Ընկերութեան ճիւղերի հետ, ղեկավարում և միացնում է Ընկերութեան գործունէութիւնը, Ընկերութեան անունից յարաբերութեան մէջ է մտնում հաստատութիւնների և անձանց հետ, պաշտպանում է Ընկերութեան շահերը, իբրև իրաւական անձ, դատարանի առաջ և առհասարակ ուր որ հարկն է։

§ 31. Վարչութեան Նախագահը հսկում է այս Կանոնադրութեան և Ընդհանուր ժողովի, Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի որոշումների ճիշտ կատարման, հրաւիրում է Ընդհանուր ժողովները և Վարչութեան նիստեր։ Նրա

բացակայութեան ժամանակ նրա պարտականութիւնները կատարում է փոխ-նախագահը։

§ 32. Վարչութեան քարտուղարը պատրաստում է Վարչութեան արձանագրութիւնները, կառավարում է ամբողջ գիւանատունը և պահում է Ընկերութեան գիւանը։

§ 33. Վարչութեան գանձապահը վարում է Ընկերութեան դրամարկղը, ծախսեր է անում Վարչութեան որոշումների համեմատ, պահում է Ընկերութեան դրամական վաւերաթղթերն ու արժէթղթերը, պատասխանում է Ընկերութեան գումարների ապահովութեան համար և հսկում է հաշւապահութեան կանոնաւոր ընթացքին։

§ 34. Ընթացիկ ծախսերի համար գանձապահը կարող է իր մօտ ունենալ մինչև հարիւր ռուբլի, իսկ Ընկերութեան մնացած գումարները պահւում են տեղական դրամատներից մէկում ըստ Վարչութեան որոշման։

Բ) ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

§ 35. Խմբագրական մասնաժողովը կազմւած է եօթը կամ ինն անդամից։

Ծանօթ. Ընդհանուր ժողովը կարող է ընտրել, բացի ընդհանուր Խմբագրական մասնաժողովից, նաև յատուկ մասնաժողովներ՝ օրինակ,

ժողովրդական կամ մանկական են գրքեր հրատարակելու նպատակով։

§ 36. Խմբագրական մասնաժողովը ընտրում է իր միջից նախագահ, փոխնախագահ և քարտուղար։

§ 37. Խմբագրական մասնաժողովը ա) ընտրում է տպագրելիք գրքերը, բ) յայտարարում է մրցանակաբաշխութեան նիւթեր և մրցանակներ է նշանակում ներկայացրած լաւագոյն աշխատութիւնների համար. գ) որոշում է հեղինակներին կամ թարգմանիչներին տալիք վարձատրութեան չափը, Վարչութեան հետ միասին Խառը ժողովում սահմանած սակագնով. դ) պատրաստում է նախընթաց տարւայ իր գործունէութեան հաշիւը և իր առաջարկութիւնները առաջիկայ տարւայ համար, Վարչութեան միջոցով Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար։ Առանց Խմբագրական մասնաժողովի որոշման, ոչ մի գիրք չի կարող տպւել։

Ծանօթ. Մրցանակաբաշխութեան համար կարող են կազմւել առանձին Յանձնախմբեր Խմբագրական մասնաժողովի ներկայացուցիչներից և կողմնակի մասնագէտ-անձերից, Խմբագրական մասնաժողովի ընտրութեամբ։

§ 38. Խմբագրական Մասնաժողովի նախագահը մասնակցում է Վարչութեան նիստերին խորհրդակցական ձայնով։

ԽԱՌԸ ԺՈՂՈՎՆԵՐ

§ 39. Հեղինակներին և թարգմանիչներին տալիք վարձատրութեան սակագին որոշելու և այն տարաձայնութիւնները վերացնելու համար, որ տեղի են ունենում Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի մէջ, Վարչութեան նախագահը հրաւիրում է Խառն ժողովներ Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի անդամներից։ Ներկայ եղողների պարզ մեծամասնութեամբ ընդունւած որոշումները պարտաւորական են թէ Վարչութեան և թէ Մասնաժողովի համար։

§ 40. Խառն ժողովում նախագահում է Վարչութեան նախագահը։

Դ) ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

§ 41. Վերաստուգիչ մասնաժողովը ընտրւում է մէկ տարով առնւազն երեք անդամից և իր միջից ընտրում է նախագահ և քարտուղար։

§ 42. Վերաստուգիչ Մասնաժողովն իրաւունք ունի իրապէս քննելու Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի հաշիւները, ստուգում է Վար-

չութեան նախընթաց տարեայ հաշիւը, նախքան Ընդհանուր Ժողովին ներկայացնելը, և այս հաշուի մասին իր նկատողութիւնները տանում է Ընդհանուր ժողովին։

ՏԵՂԱԿԱՆ ՃԻՒՂԵՐ

§ 43. Ընկերութեան տեղական ճիւղերը բացուում են Կովկասի զանազան վայրերում, Ընկերութեան նոյն տեղը գտնուող տասն անդամների գրաւոր յայտարարութեամբ, Ընդհանուր Ժողովի հաստատութեամբ և 1906 թւի ընկերութիւնների և ժողովների մասին մարտի 4-ի օրէնքի 32 յօդուածի պահպանութեամբ։

§ 44. Ընկերութեան ճիւղերը ա) բացում են իրենց վայրերում, համապատասխան դէպքերում պատշաճաւոր թոյլտուութեամբ և այս առարկային վերաբերեալ գործող օրէնքների և պետական առանձին կարգադրութիւնների պահպանութեամբ, գրքերի պահեստներ և վաճառանոցներ և կազմակերպում են գրավաճառութիւնը շրջիկների և այլ միջոցներով, ինչպէս անկախ կերպով, նոյնպէս և Ընկերութեան Կենդրոնական Վարչութեան աջակցութեամբ. բ) հաղորդում են Վարչութեան իրենց կարծիքները Ընկերութեան հրատարակութիւնների մասին։ գ) հրատարակում են իրենց առաջարկած և Կենդրոնական Խմբագրական մասնաժողովի հաւանութիւն ստացած գրքերը և դ) նպաստում են Ընկերութեան միջոցների շատանալուն նոր անդամներ գտնելով, կազմելով իրենց վայրերում, ամեն առանձին դէպքում պատշաճաւոր թոյլտուութեամբ, դասախօսութիւններ, երեկոյթներ և ամեն տեսակ զարգացութիւններ համաձայն Կանոնադրութեան § 14.

§ 45. Տեղական ճիւղերը բոլոր անդամավճարները յանձնում են Կենդրոնական գանձարանին, իսկ մնացած եկամուտները գործադրում են համաձայն տեղական Ընդհանուր ժողովներից հաւանութիւն գտած և Կենդրոնական Վարչութեան միջոցով Կենդրոնական Ընդհանուր ժողովի կողմից հաստատուած նախահաշիւների։

§ 46. Կենդրոնական Ընկերութիւնը և նրա ճիւղերը կարող են փոխադարձաբար օգնել իրար նիւթականով և այլ կերպ։

§ 47. Ճիւղերը ունեն իրենց Ընդհանուր ժողովները, որոնք ընտրում են տեղական Վարչութիւններ առնուազն երեք անդամից և նոյն թւով փոխանդամներից, ինչպէս և Վերաստուգիչ մասնաժողով։ Վարչութիւնը իր միջից ընտրում է նախագահ, գանձապահ և քարտուղար։ Վարչութեան նախագահը կարող է մասնակցել Կենդրոնական

Վարչության նիստերին իր ճիւղին վերաբերեալ հարցերում ձայնի իրաւունքով.

§ 48. Վարչությունը կառավարում է տեղական ճիւղի բոլոր գործերը, գործելով համաձայն այս Կանոնադրության § 24—34, առաջարկում է տեղական Ընդհանուր Ժողովի հաւանությանը նախընթաց տարւայ հաշիւը և առաջիկայ տարւայ նախահաշիւը և նրա հաւանությունն առնելով՝ ներկայացնում է Կենդրոնական Վարչության միջոցով Կենդրոնական Ընդհանուր ժողովի հաստատությանը։ Վերաստուգիչ Մասնաժողովը գործում է սոյն Կանոնադրության § 41—42 համաձայն։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

§ 49. Այս Կանոնադրության մէջ որևէ փոփոխութիւն կատարւում է § 21 և § 23 պահանջների համեմատ և ներկայացւում է մատեան մուծելու համար սահմանւած օրինական կարգով։

§ 50. Ընկերության գործունէության դադարման դէպքում, արտակարգ Ընդհանուր ժողով է հրաւիրւում, որը և որոշում է Ընկերության պատկանեալ գոյքը, ամբողջովին կամ մաս-մաս, այս կամ այն հաստատութիւններին յանձնել։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ ... СССР
Ա. ... Ա ... ԵՐԵՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0296018

23.824
12-41962

1
2